ՄԵԾ ՎԻՐԱՀԱՏՈՒՄԻՑ ԱՌԱՋ

Շուրջ հինգ տարի և հինգ ամիս իտալացի աղջիկներ Ջուլեպինան և Սանտինան ապրում են Տուրինի մանկական կլինիկայում: Մեկը չի կարող ապրել առանց մյուսի: Բնությունը չհասցրեց ավարտել ձվաբջջի բաժանումը: Եվ այդպես երեխաները ծնվեցին «կամրջով» իրար միացած՝ սրբանոսկրի շրջանում:

Հինգ տարի է բժիշկները ուսումնասիրում են նրանց օրգանիզմի ֆունկցիաները: Հինգ տարի նրանք քայլ առ քայլ պատրաստում են անջատման դժվարին վիրահատումը: Այժմ արդեն անջատված են ուղիղ աղիքը և պոչոսկրը:

Երկվորյակները բարեհաջող կրեցին բոլոր վիրաբուժական միջամտությունները, և վիրաբույժները հուսով են, որ վճռական անջատումը նույնպես հաջող կանցնի:

Սանտինան և Ջուլեպինան հինգ տարեկան (վերևում), վեց ամսական (ձախից) և երկու տարեկան հասակում:

digitised by A.R.A.R.@